Նախագիծ 43

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-------- մարտի 2011 թվականի N --------- - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 161-Ն ՈՐՈՇՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 16-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 4 հավելվածի N 1 աղյուսակում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1748-Ն որոշման N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել փոփոխություններ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց բյուջետային վարկեր տրամադրելու, Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 161-Ն որոշման 3-րդ կետում նշված «300000000» թիվը փոխել «1000000000» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի ———ի N ——— - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 4 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

(հազ. դրամ)

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (մուտքերի ավելացումը նշված է դրական նշանով, իսկ ելքերինը՝ փակագծերում)			
	առաջին եռամսյակ	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	-
այդ թվում՝				
Ա. Ներքին աղբյուրներ-ընդամենը	-	-	-	-
այդ թվում՝				
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	-	-	-	-
այդ թվում՝				
2.4. Վարկերի և փոխատվությունների տրամադրում	(1,000,000,.0)	(1,000,000.0)	(1,000,000.0)	(1,000,000.0)
այդ թվում՝				
գ) կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից վարկերի տրամադրում ֆիզիկական անձանց	(1,000,000,.0)	(1,000,000.0)	(1,000,000.0)	(1,000,000.0)
ՀՀ ֆինանսների նախարարություն	(1,000,000,.0)	(1,000,000.0)	(1,000,000.0)	(1,000,000.0)
2.6. Այլ	1,000,000,.0	1,000,000.0	1,000,000.0	1,000,000.0
այդ թվում՝				
կայունացման դեպոզիտային հաշվից օգտագործում	1,000,000,.0	1,000,000.0	1,000,000.0	1,000,000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 161-Ն ՈՐՈՇՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրավական ակտի հիմնավորումը	
1.	Անհրաժեշտությունը
	Սույն որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է մաքսային օրենսդրության փոփոխությունների անցումային շրջանում ֆիզիկական անձանց կողմից ներմուծված տրանսպորտային միջոցների մաքսազերծմանը աջակցելու նպատակով
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	ՀՀ տարածքում մշտական բնակվող բազմաթիվ քաղաքացիներ մինչև 2011թ փետրվարի 5-ը ներառյալ <ժամանավոր ներմուծում> մաքսային ռեժիմով ներմուծել են մարդատար տրանսպորտային միջոց(ներ) և ներկայումս վերոհիշյալ անձանց մոտ ֆինանսական խնդիրներ են առաջանում կապված տրանսպորտային միջոցների վերահայտարարագրման և <Ներմուծում՝ ազատ շրջանառության համար> մաքսային ռեժիմով դրանց մաքսազերծման ժամանակ:
3.	Կարգավորման նպատակը և բնույթը
	Որոշման ընդունման նպատակը ֆիզիկական անձանց կողմից ներմուծված տրանսպորտային միջոցների մաքսազերծմանը աջակցելն է:
4.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք
	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության պետ Ա. Եսայան:
5.	Ակնկալվող արդյունքը
	Մինչև 2011թ փետրվարի 5-ը ներառյալ <ժամանավոր ներմուծում> մաքսային ռեժիմով ներմուծած ՀՀ տարածքում մշտական բնակվող բազմաթիվ քաղաքացիների բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման տարաժամկետման հնարավորություն, ինչի հետևանքով կնվազի սոցիալական լարվածությունը: